

ՊԱՏՄԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԹԵՐ ԶԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ



Միննոյն դարում Արշարունեաց կամրջածորի վանքում պատմութիւնը արձանագրում է 300 կրօնաւորների գոյութիւնը, նրա առաջնորդը՝ Սամուէլ կամրջածորեցին, մականուանեալ Իմաստակ, վարժ էր Ս. Գրքի գիտութեանը, ժամաբադիտութեանը և երաժշտութեանը: Մատթէոս Ուռնայեցին պատմում է, որ ժ դարում, երբ մի տոմարական վէճ ծագեց Յոյն վարդապետների մէջ, Բիւզանդական կայսրը հրամայում է Սամուէլին կանչել վիճարանութեան: Ետեւեւ Յունաց բոլոր գիտունները զլարժեցին ի վերայ Սամուէլի զամենայն զրեան տանն Յունաց և ոչ կարեցին շարժել զնա ի ճշմարտութեանց անտէ: Նոյն վանքում ժՊ դարում ծագեց Գէորգ Ուռնեցի հարիւրամեայ ծերունի ատենախօսը, որին անուանում է պատմիչը ճշգրիտ մշտնջենարուխ վտակաց և լեզու հրեղէն հրովն ներկեալ: Եփրակի Հոռոմոսի վանքը ևս ունեցաւ իր գիտնական վարդապետները, որոնցից մէկին՝ Յովհաննէսին յիշում է Ասողիկը: Այդ վանքին ունէր հարուստ մատենադարան: Սանահինում ևս կար մի մեծ գրատուն, ուր ժողովուել էին, ինչպէս պատմում է Կիրակոս Գանձակեցին, շատ գիտնական և ուսումնասէր մարդիկ, որոնցից մէկն էր Անանիա Սանահինցին, այդ մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի և աստուածային գրոց մեկնող: Սանահինից ոչ պակաս երևելի էր գիտուններով և լուսաւորութեամբ Հաղբատի վանքը, որտեղ ժ դարում եղել է մինչև 500 կրօնաւոր. այնտեղի մատենադարանը, որ պատմիչները անուանում են «ամենափարթամ զանճարան», մասամբ տեղաւորուել էր այրերի մէջ: Կրօնաւորներն այնքան յափշտակուում էին այդ զանճարանի ուսումնասիրութեամբ, որ մինչև անգամ օրերով մոռանում էին իրենց առանց այն էլ սակաւապէտ կերակուրը: Այդ քարանձաւների գրատունները նիւթ տուին ժՊ դարի վերջերում Յովհաննէս Սարկաւազ վարդապետին կազմելու իր սարկաւազադիր տոմարը: Կիրակոս Գանձակեցին սրա ուսումնասիրութեան բազմաթիւ աշխատութիւնները թուելով, նորագիտ տոմարի մասին այսպէս է խօսում. «Սա զբազմաց փափաքեցի և ոչ ձեռնահասս Հաստատ և զանլարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց»: Իր ընդարձակ հմտութիւններով և սուրբ վարքով Սարկաւազ վարդապետը «մեծ իմաստն քան զՏուրովս և Հանճարեղն ամենայնի», ներգրաւեց Հաղբատի դրպրոցը բազմաթիւ ուսումնասիրաւ երիտասարդների, որոնց մէջ յիշատակութեան արժանի են ժամանակագրութիւնների հեղինակ Սամուէլ Անեցին և Ալավկայ որդի Գաւիթը, որ ճկաննք գրեաց դիւրահաս: Հայ ժողովուրդը պատկառանքով խոնարհեցնում է իր գլուխը մեծ վարդապետի առաջ գիտութիւն և օրհնութիւն ստանալու նրանից. յիշատակութեան արժանի է նրա մի

ալյարանական երգը սարևակի մասին, ուր պատկերացնում է միայնակեցի նը-
շանակութիւնը. դրէլ է բազմաթիւ ճառեր և մի պատմութիւն Հայոց, որ դեռ-
ևս անծանօթ է բանասիրութեանը :

Միւս վանքերի մէջ առանձնապէս փայլեց Սևանի վանքը Թ դարում ,
ուր նշանաւոր Հանդիսացաւ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսը, որը մեր ազ-
գին պարզեւեց Յովհաննէս պատմաբան կաթողիկոսը : Հայ վանքերի մէջ ա-
ռանձնապէս որպէս ուսումնական կենտրոն Հանդիսացան նաև Թղենեաց Հա-
ուուցթաւի, Խոր Վիրապի վանքերը և Ալբիվանքը :

Ժ դարում Հայոց աչքի ընկնող զարոցներից մէկն էր Համարում Արա-
բատեան Նիզ գաւառի Թեղուտ գիւղի վանքին կից զարոցը : Ասողիկի վկայու-
թեամբ, այստեղ գուտ ուսումնական գործով էին զբաղուում Երեմիա Թեղեկա-
ցին և «Կիրակոս Գծածակերպ դիտնականը, որ բնակէր Հոլովակի յանապատին ,
որ Թեղենիսն կոչի, ի Նիզ գաւառի» :

Այս զարոցը իր գոյութիւնը պահել է մինչև ԺԳ դարի կէսերը : Գան-
ձակեցին մանրամասն տեղեկութիւններ է Հաղորդում այս զարոցի մասին :

ԺԲ-ԺԳ դարերում ծաղկում է նաև Հաուուցթաւի զարոցը : Այս զարոցի
սիւներն են Հանդիսացել Մխիթար և Զաքարիա եպիսկոպոսները (ԺԳ դար) :
Մխիթարի օրօք էր, որ այս վանքում Միւնեաց իշխանները, Հայոց յայտնի
վանքերի եպիսկոպոսներն ու վարդապետները, խոշոր զարոցների գուլիս կանգ-
նած բարունապետները Հաւաքուեցին մի մեծ ժողովի և գրեցին իրենց բողոքի
յայտնի թուղթը Գրիգոր Անաւարդեցուն : Այս զարոցի յայտնի մանկավարժնե-
րից նշանաւոր էր Եղիան . «Եղիա ի Հաուուց Թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգա-
ւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան Հնչնի-
եթէ բարձր և թէ ցած . և ոչ Հարստահարէր ընկեր զընկերն» (Գանձակեցի) :
Երաժշտութեան պատմութիւնն ուսումնասիրելիս կարող ենք Եղրակացնել, որ
Եղիա վարդապետը խմբերգեր է ղեկավարել, պահպանելով երգչախմբի բոլոր
կանոնները : Այս զարոցի յայտնի աշակերտներից են եղել Մկրտիչ, Թովմա,
Յակոբ և այլք, որոնք ուսանել են յայտնի ուսուցիչ Յովսէփ և Եղիա վարդա-
պետների մօտ : Մանուէլ Բջնեցին փառաբանելով Հաուուցթաւը, բացական-
չում է .

«Յնծա, հրաշքամ, ով համալսարան,
Ուխտ եռչակամուռ
Սուրբղ մեմաստամ Հայու Թառ անուամ,
Թառ քարգմնուքեան» :

Սկսած ԺԳ դարից յայտնի է դառնում նաև որպէս մշակոյթի կենտրոն
Խոր Վիրապի վանքը : Այդ զարոցի Հիմնադրումը իրաւամբ կապում է յայտնի
իմաստասէր, անուանի մատենագիր և Հայ մանկավարժութեան փայլուն աստղ
Վարդան վարդապետ Արեւելցու անուան Հետ : Արեւելեան Հայաստանի ամենա-
պայծառ Հոյե որակասներից մէկն էր Վարդան Արեւելցին, որը Հանդիսացաւ
Խոր Վիրապի զարոցի Հիմնադիրը : Վարդան վարդապետ Արեւելցու աշակերտ-
ներից մէկը, Գէորդ Համբրոնացին, 1267 թուականին իր գրած տօնապատճառի
յիշատակարանի մէջ խօսում է Վարդան վարդապետի՝ Խոր Վիրապի ուսուցչա-
կան գործունէութեան մասին . «Որ ընդ ամենայն ժամանակս ի վերայ ամենայն
մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաքինութիւն, և զուսուցչապետն և
զգործ ի դիր արկանել . ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն սրբոյն Գրիգորի
նստելով՝ զամենայն եկեակսն աստուածայինսն ուղղել ճանապարհ» :

Մենք ունենք այլ փաստեր ևս 1290 թուականին Խոր Վիրապի զարոցի,

Վարդան վարդապետի և նրա աշակերտների մասին : Վարդան վարդապետը 16 տարիներ շարունակ ղեկավարել է այդ դպրոցը և վանքը վերածել կարևոր մշակութային կենտրոնի :

Գեղարդայ վանքը ղեռն և ղ դարից յայտնի է ոչ միայն որպէս վանք, այլև որպէս ուսումնաստեղ : Այդ դպրոցի առաջին ուսուցիչներից մէկն է եղել Գրիգոր Գոգիկ վարդապետը : Նա յայտնի է եղել որպէս երաժիշտ :

Այս վանքի և դպրոցի ամենաուժեղ ծաղկումը տեղի է ունեցել ԺԳ - ժԵ դարերում և յատկապէս ԺԳ դարում, երբ այս դպրոցի ղըւււն էր կանդնած անուանի մատենագիր գիտնական Մխիթար Այրիվանեցի վարդապետը : Իրենց ժամանակին այս դպրոցի հետ կապեր են ունեցել Գառնեցին, Մկրտիչ, Յովհաննէս և Կիրակոս Երզնկացի վարդապետները և ուրիշ շատ նշանաւոր մարդիկ : Այրիվանեցուց յետոյ դպրոցի ամենից աւելի աչքի ընկնող ղէմքը պէտք է համարել Միմէոն Այրիվանեցուն :

Միմէոնից յետոյ Այրիվանքի դպրոցում անուանի ուսուցիչներ են դասնում Ներսէս և Յովհաննէս վարդապետները, որոնց մասին նրանց աշակերտներից մէկը ասում է. «Քաղաքաբախ հոգևոր հայրերն են մեր վարժապետներ՝ Ներսէս և Յովհաննէս Ծաղկող, որ բազում երախտիք ունին ի վերայ մեր» : Նոյն դպրոցում յայտնի նկարիչներ են եղել Ստեփաննոս և Մասթէոսը. Գարեգին կաթողիկոս Յովսէփեանը իրաւամբ բացականչում է, որ «ԺԵ դարում Այրիվանքը կառարեյապէս ծաղկած վիճակի մէջ է եղել» :

ԺԳ դարում Յովհաննէս Արամեցի վարդապետի շնորհիւ ծաղկում է Հաղարծնի վանքը Զարարեանների օժանդակութեամբ : Հաղարծնի վանքի դրպրոցի հիմնադրումը կապուած է անուանի երաժշտագէտ Պաշտուր վարդապետ Տարօնեցու անուան հետ : Հաղարծնի յայտնի վանք և ուսումնաստեղ լինելու մասին վկայութիւն տալիս է Վարդան Արևելցին : Հաղարծնի վանքը ու նրա դպրոցը առաւելապէս յայտնի դարձան այն ժամանակ, երբ նրա գլուխ էր կանդնած Պաշտուր վարդապետ Տարօնեցին : Գանձակեցին վկայում է. «Պաշտուր Տարօնացի, այր առաքինի և գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի : Սա պայծառացոյց զուխան՝ որում առաջնորդ էր ինքըն, որ յառաջ քան զգայն նորա՝ ամայի էր և խամբացեալ» : Այնուհետև, ինչպէս երաժշտութիւնը, այնպէս էլ այլ իմաստասիրական գիտութիւնները Տարօնացին ուսուցանում էր Հաղարծնի դպրոցում, իր շուրջը հաւաքած աշակերտներին : Ժամանակակից պատմիչը հաստատում է. «Սա երբը ղխազն ի կողմանն յարևելից, զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակս չև էր սփռեալ ընդ աշխարհս : Սա եկեալ դրեաց և ուսոյց բազմաց. և բազում հանդիստ եղև ի ծանր աշխատութեանց» :

Պաշտուր վարդապետ Տարօնացին այս վանքում առաջինն էր, որ երկրից «Սորհուրդ խորին»ը :

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ ԿԻՒԻԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՇԻՋԱՆՈՒՄ

Անին 1064 թուականին զրաւուեց Սելջուկ Թուրքերի կողմից, որի հետևանքով ինչպէս Հայ ժողովուրդը, այնպէս էլ հայկական Հայրապետական Աթոռը գաղթեց ղէպի Կիլիկիա : Այդ շրջանում յատկապէս յատկանշական է ընդգծել Սև լեռան վրայ ծաղկող Հայ վանքերը և նրանց կողքին վարդապետարանները : Հակառակ քաղաքական անկայուն դրութեան, վանքերին կից վարդապետարանները, շնորհիւ Պահլավունի կաթողիկոսների ճիգերին ու ջանքե-

բին և Հայ իշխանների պաշտպանութեան և զործակցութեան, գիտաւորների տպաւորութիւն թողնող կարճակեաց, բայց փայլուն արդիւնքով զգալի ծառայութիւն են մատուցում, այն աստիճան, որ ստեղծուած է շատերի կողմից մեր գրականութեան և արուեստի շարժաթիչ գարջ որակուածք: Վարդապետարանների աւելի աչքառու կախաններն են Շուգրը, Ընկուզուարը, Հետունեաց անսպաւրը, Հոսովյան, Կարմիր վանքը, Արքակազնի վանքը, Դրազարկը, Կաստազոնի վանքը:

Այն շրջանում զործող տիճառու վարդապետներն են եղել Գրիգոր Վրկայաւոր կաթողիկոսը, Վայր քաջակիրթ և ամենայն հմտութեանց Հետեհալ, և բովանդակ հասեալ ի վերայ Հին և Նոր Կտակարանաց Աստուծոյ... ընդ իմաստասէրն նստէր ի յամբիոնիցն ի մէջ սբոյն Սոփիի»: «Յօսէր ընդ վարդապետացն Հոսոնոց և ի կարգին վարդապետացն էր յաղագս Հայոց»: Այնուհետև նա Սև Լերան վանքերում ձմիշտ պարապեալ ընթերցման սուրբ գրոց և աստուածախօս աղօթից»:

Շնորհալին աւելի մանրամասն է խօսում Գրիգոր Վկայաւորի Սև Լերան վրայ անցկացրած կրթական գործունէութեան մասին.

«Ի Սեաւ մըքիմ լեառմ անուանեալ,
 Զբանի սիրոզսմ եաւաքեալ,
 Եւ առ ինքեան բնակեցուցեալ,
 Զգիրս հոգւոյն միշտ ընթերցեալ,
 Եւ ընդ մասին յար խօսակցեալ»:

Կարմիր վանքը Բեառնի մօտ, Շուգր տնուանուած լերան վրայ, երբեմն ունեցել է շատ փայլուն միճակ: Այդ վանքում է փայլել Ստեփաննոս Մանուկ վարդապետը՝ իր անուշով հռչակ տալով վանքին: Նրա մասին յիշատակազիրն ասում է. «Մանուկ մի քահանայ գոյլով և վարժեալ ի Հին և Նոր Կտակարան վարդապետական ուսմամբ՝ ի հօրեղօրէն իւրմէ, անուն կոչեցեալ ՐՍտեփաննոս, որպէս ութ և տասնամենից, սորա ընդ այլ փախտական հասեալ ի Բեառնոյ, ի մէջ հռչակ սուրբ ուխտն, որ Կարմիր վանքն կոչուի. և նոյն տեղին բնակեցաւ, բայց ծածկեաց զանուն վարդապետութեանն վասն մանկական հասակին»: Ստեփաննոս Մանուկի անունը շուտով տարածուած է: Այս անուանի և պերճախօս վարդապետի մօտ են հաւաքուած բազմաթիւ աշակերտներ, որոնցից նշանաւոր են Հանդիսանում և իրենց ստացած ուսմամբ և կրթութեամբ փայլում են Գրիգոր Փոքր Վկայաւոր, Ներսէս Շնորհալի, Սարգիս, Իգնատիոս և Բարսեղ մեկնիչները, բոլորն էլ «Շնորհալի» տիտղոսով պատուուած: Ստեփաննոս Մանուկի աշակերտներից Ներսէսը՝ Մատթէոսի, Բարսեղը՝ Մարկոսի, և Իգնատիոսը՝ Ղուկասի Աւետարանների մեկնութիւնները գրել են: Իսկ Սարգիսը՝ Կաթողիկեաց Թուղթիւնը:

Ստեփաննոս Մանուկը մինչև իր մահը մանկավարժական գործունէութիւն է ծաւալել. շնայած իրենից ոչ մի գրուած աշխատութիւն չի հասել մեզ, սակայն իր ձեռքի տակ մարզուած աշակերտների զբաւոք աշխատութիւնները ցոյց են տալիս, թէ անիկա մեթոտ ունեցող ուսուցիչ մը և աւելի գործնական ու հմուտ անձ մը եղած է» (Ալլոյօյանեան):

Ստեփաննոս Մանուկի աշակերտներից են Հանդիսացել նաև Կարմիր վանքում Ներսէս Լամբրոնացին, որ ատեսյականին կրթութեամբ յատալ էր»:

Վկայութիւններ կան, որ արևելեան Հայաստանի վարդապետներից էլ են գնացել Կիրիկիա՝ Կարմիր վանք: Դրանցից նշանաւոր է Հանդիսացել Մխի-

Թար Գոշը, որ ըստ աւանդութեան, ծածկել է ինքնութիւնն ու աստիճանը, որ-
պէսզի հնարաւորութիւն ունենայ սովորելու Ստեփաննոս Մանուկի դպրոցում :

Կիլիկիայի Հայկական վանքերի կրթութեան, գիտութեան և արուես-
տի կենտրոնները ուսումնասիրելիս և քննարկելիս, Համոզում ենք, որ Դրա-
զարկը և Սկեռան հանդիսացել են քաղաքական-վարչական կենտրոններ, իսկ
Հոռոմկան հոգևոր կենտրոն՝ իր վարդապետարանով :

Հոռոմկայի վարդապետանոցը հիմնադրուած է Ներսէս Ծնորհալու
կողմից . նրա ուսանողներից մէկն է Գրիգոր Պահլավունի Տղայ կաթողիկոսը
(1173 - 1193) :

Դժբախտարար Հոռոմկայի վարդապետարանի կիսներ կարճատև է լի-
նում, որովհետև այն պատուելով Եզրիպտացիների կողմից (1292 Յուլիս 28ին),
Հայոց Հայրապետական Աթոռն էլ փոխադրուած է այնտեղից իր վարդապետա-
րանով :

Դրազարկի վարդապետանոցը ծառայել է Հայրապետանոցին որպէս
նրա կրթարանը : Այստեղ Գէորգ Լոռեցին իբրև կաթողիկոս գործել է, օգուտ
տալով այդ դպրոցին և վանքին : Դրազարկի միաբանութեան գործն է եղել ար-
տադրել մատենաներ, ինչպէս նաև Ս . Գրգի և սուրբ Հայրիկի աշխատութիւն-
ները : Այս իսկ պատճառով այդ վանքը ժամանակակիցներից կոչուել է հռչա-
կաւոր վանք :

ԺՊ գարում Սոի մօտերում ծաղկում է Արքակաղնի վանքը իր դպրո-
ցով : Այդ ուխտի նման խոտակրօն կացութեամբ յայտնի է Կասառղոնի վանքը
Վահկարիքի մօտ, իր ծագմամբ ամենահինը Կիլիկիոյ վանքերի մէջ : Այս
վանքում, ինչպէս յիշում է ՈւռՀայեցին, ճղնաւորներն անգամ պարապում էին
դիտութեամբ :

Ս . ԷՋՄԻԱՇՆԻ ՎԱՆՔԻ ԳՊՐՈՑԸ

Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատեան զաշտալայրում ժԵ
գարում վերահաստատուած Հայրապետական Աթոռը գոյութիւն ունեցող պայ-
մաններում, ձգտում էր Հայ ազգային-եկեղեցական կեանքի զարթօնքին :

Սիւնեաց և Վասպուրականի դպրոցների հրազար այդ էր, երբ ոգի է բը-
ռին պայքարում էին Աթոռի փոխադրութեան համար :

Հոգևոր և մշակութային պատմական այդ կենտրոնի շուրջ աշխարհիկ
և եկեղեցական գործիչների համախմբումը Ստեփաննոս Օրբելիանի բառերով
փորձում էր վերագտնուած տեսնել զգաթու Թագաւորին և զգաւազան պատ-
րիարքին՝ նորից ծաղկած, այսինքն գլուխ բերէր Հայաստանի լիակատար ան-
կախութիւնը :

Հայրապետական Աթոռը 1441 Թուականին վերստին էջմիածին տեղա-
փոխուելուց յետոյ նոր Թափով զարկ արուեց հոգևոր-մշակութային կեանքի
բարձրացման և կազմակերպման : Վանական մշակութային կեանքը Սիւնեաց
Մեծ Անապատի օրինակով ծաղկեց, բացուեցին լուսաւորութեան նոր կենտ-
րոններ :

Վերադարձման այս հզոր ալիքում, բնական է, մեծ բաժին ունէր էջ-
միածնի Ամենայն Հայոց կաթողիկոսարանը՝ ամբողջ Հայութիւնը անխորտա-
կելի կերպով իրար զօդող ամենայուսալի և վստահելի ուժը : Իսկ էջմիածինը
կարող էր գործել իր դիրքին վայել մի դպրոցի միջոցով միայն, որի գործիչ-
ները կրթուած լինէին իր հետապնդած եկեղեցական ազգային սուրբ ձգտում-
ներով :

էջմիածնի նոր դպրոցը Հիմնադրուեց 1441 թուականին՝ Աթոռի փոխադրութեան զուգընթաց :

Պարզ է, որ այս չիփթեկ խառնակ ժամանակաշրջանում կրթական դործը մեծապէս առւեց : Այնուամենայնիւ, գործում են մի շարք դպրոցներ, Հայաստանում առկայծ պահպանուած է մտաւորական կեանքի զոգոզումն ջահը :

Այնտեղ նոյնիսկ հանդիպում ենք իրենց ժամանակի համար ուշադրու, զարդացման բարձր աստիճանի Հասած մի քանի նշանաւոր մարդկանց ու կենտրոնների :

Այդ նշանաւոր մարդկանցից մէկն է Ստեփաննոս Սայմաստեցի (1543-1552) կաթողիկոսը, երկրորդը՝ Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսը (1567-1576), որոնք Հայաստանի այլ վանքերում իրենց ուսումը կատարելագործելուց յետոյ այն փոխադրեցին էջմիածին : Էջմիածնի դպրոցը բացուեց նախ Երևանում, Սուրբ Անանիա անապատում (այժմեան Ս. Ջորաւոր եկեղեցի) : Մովսէս Տաթևացու գործունէութեամբ Հիմն է դրուած Երևանեան վարդապետարանի, որ Տաթևացու կաթողիկոսանալով իր ծաղկման բարձրակէտին է հասնում : Իր ողջ գործունէութիւնը եկեղեցու պայծառացման, ուսման տարածման նուիրած, Մովսէս Տաթևացու շուրջ խոստմնալից և ջանասէր աշակերտներ խմբուեցին : Այդ դպրոցի սիւնն էր Մեկիսեղեկ Վեպեցին : Սիւնն Ջուղայեցու օրօք, 1640 թուին, Փիլիպոս կաթողիկոսի շրջանին (1633 - 1655) դպրոցը փոխադրուած է էջմիածին : Մովսէս Գ Տաթևացուն (1629-1632) յաջորդուած է Փիլիպոս Ա Աղբակեցին (1633-1655), որը իր ժամանակի ուսեալ հոգևորականներից էր : Աղբակեցին 1640 թուին Յովհաննայանքում գործող վարդապետարանը վերջնականապէս փոխադրուած է էջմիածին :

Յակոբ Գ Ջուղայեցին (1655-1680) կաթողիկոսանալով, Ս. էջմիածնի դպրոցին մեծ զարկ է տալիս շնորհիւ Ստեփաննոս Լեւոնցուն : Յակոբ Գ Ջուղայեցու վախճանումից յետոյ սկսուած է ալիկոծ մի շրջան : Եղիազար Այնթապցի (1681-1691) և Նահապետ Ուռուայեցի (1691-1705) կաթողիկոսների օրով էջմիածնի վարդապետարանը զգալի վայրէջք է ապրում :

ԺԸ դարում, շնորհիւ Սիմէոն կաթողիկոս Երևանցու ջանքերի, Ս. էջմիածնի դպրոցը վերելք է ապրում, Պետրոս եպիսկոպոս Բերդուսեանի ուսուցչապետութեամբ : ԺԹ դարի արշալոյսին Դաւիթ-Դանիէլեան պայթարի դրժնդակ ժամանակաշրջանին, Ս. էջմիածնի դպրոցը համարեա թէ փակուած է : Վերարացուած է Եփրեմ կաթողիկոսի օրօք՝ 1813 թուականին զվայելուչ և ազգասիրական փութով եռանդեամբ սկիզբն առնէ Հիմնադրութեան մեծակառոյց ուսումնարանին էջմիածնի, ի Հիւսիսոյ յարեւելից վանացն ի վերայ տանեաց դասակարգի սենեակաց միարանից» : Այդ դպրոցում իրենց ուսումն են ստացել Խաչատուր Արոյիկանը, Մեսրոպ Թաղիադեանը, Մսեր Մսերեանցը և իր ժամանակի աչքի ընկնող նշանաւոր եպիսկոպոսներ և վարդապետներ :

1836 թուին Հրատարակուեց Պրոտեկիան : Այդ կանոնադրութեան համաձայն կաթողիկոսարանն ու թեմական կենտրոնները պէտք է ունենային իրենց համապատասխան դպրոցները, պետութիւնից Հաստատուած ծրագրով և պետական վերահսկողութեան ներքոյ :

1836-1840 թուերից էջմիածնի դպրոցը գործում է համաձայն Պրոտեկիայի տրամադրութիւնների : Կարբեցու օրօք էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը որոշ վերելք է ապրում, իսկ Աշտարակեցու շրջանին այն որոշ չափով առաջ է մղուած շնորհիւ Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի, ու յարատեւում Մատթէոս Ա և Գէորգ Դ կաթողիկոսների օրօք : Ի վերջոյ Գէորգ Դ կաթողիկոսին յաջողուած է 1874 թուին բանալու Մայր Աթոռում մի ճեմարան,

յարձար շէնքով և իր ժամանակաշրջանի համար լաւագոյն ծրագրով: Գէորգեան ձեմարանը քառասուն տարուայ շրջանին Հայ Եկեղեցուն պարգևեց ոչ միայն ուսեալ Հոգևորականներ, այլև ժի՞ դարում Հայ մշակոյթի ծաղկումն ու առաջդիմումը կապում է Գէորգեան ձեմարանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի և նրա տպարանի հետ: Գէորգեան ձեմարանը փակուեց 1918 թուականին: Ս. Էջմիածնում 1924 թուին վերաբացուեց Հոգևոր ձեմարան, սակայն նա ունեցաւ շատ կարճատև կեանք՝ հազիւ մէկ տարի: Ս. Էջմիածնի ներկայիս գործող Հոգևոր դպրոցի առկայութիւնը մենք կը պարտինք երջանկայիշատակ Գէորգ Զ կաթողիկոսին, իսկ նրա ծաղկումն ու յարատևումը՝ Նորին Ս. Օձուրին Տ. Տ. Վազգէն Առաջինի անդուլ, շնորհակալ գործունէութեան արդիւնքն է, որտեղ ինքն էլ երկար տարիներ դասաւանդում է:

Ս. Էջմիածնից յետոյ երկրորդ տեղն է բռնում Հայ Եկեղեցու նուիրապետական աթոռները շարքին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքական Աթոռը, որի գործունէութեան մասին մենք այստեղ չենք խօսում, քանի որ այդ մասին արդէն մի առանձին ուսումնասիրութիւն է պէտք:

Կ. Պոլսի աթոռը 19րդ դարի վերջերը ծաղկեցրեց, շնորհիւ Օրմանեան և Դուրեան սրբազանների, Արմաշի դպրեմանքը (Ջարխափան Ս. Աստուածածին վանքը, Նիկոմիդիոյ մօտ): Այդ վանքի պարգևած ուսեալ միաբանութիւնը մեծ գործ կատարեց մինչև 1915 թուականը, հրատարակելով նաև «Լոյս» անունով թերթը:

Վարազայ վանքի դպրոցի պատմութիւնը հնամենի վաղեմութիւն ունի: Նրա մասին յիշատակութիւններ կան, ըստ որոնց սկսած 14րդ դարի սկիզբներէց այդ դպրոցը երբեմն կարճ և երբեմն էլ երկարատև ընդհատումներով իր գոյութիւնը պահպանել է մինչև ներկայ դարի սկիզբները: 19րդ դարի 70ական թուականներին Մկրտիչ Յրիմեան Հայրիկը հիմնեց այնտեղ մի դպրոց, հրատարակեց «Արծիւ» Վապուրականի» անունով թերթը, որը անդրանիկն էր Հայոց հողի վրայ: Տարիներ անց նա նոյն կեանքն արժարծեց նաև Տարսիսի Ս. Կարապետ վանքում: Յատկանշական է նաև Նոր Նախիջևանի Ս. Պաշ վանքում բացուած դպրոցը Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանի շնորհիւ 18րդ դարում: Այդ համբաւուոր արքեպիսկոպոսը նոյն վանքում հաստատեց նաև տը պարան, ինչպէս նաև մարդասիրական ընկերութիւն: 1850ական թուականներին Հարիճայի վանքում Յովսէփ քահանայ կոստանեանը և Ստեփաննոս Եպիսկոպոս Պատակեանը հիմնադրեցին մի դպրոց:

Այս բոլորից յետոյ մեզ մնում է երախտագիտական խօսք ասել մեր երանաշնորհ նախնիներին, որոնք դժնդակ և մուլթ շրջաններում Հայ Եկեղեցու կամարների տակ քրիստոնէական պլպլան մոմերի հետ միասին վառ պահեցին նաև մշակոյթի ջահը, պարգևելով մեզ դիտութիւն, յոյս, լոյս և ազգային աւնազարտ դիմադիծ:

Այսօր, երբ մեր Հայրենիքում ծաղկում է գիտութիւնը, ունենք համալսարան, դիտութիւնների ակադեմիա, բազմաթիւ դպրոցներ, և օտար երկրներից մեր վերածնունդած Հայաստան աշխարհն են զալիս օտար երիտասարդներ՝ ստանալու մասնագիտական կրթութիւն, ակամայից յիշում ենք Երզ դարի մեր հեռագնաց վարդապետներին, որոնք իրենց ուսումը կատարելագործելու համար գնում էին Աթէնք, Պոլիս կամ Աղեքսանդրիա:

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵԱՆ

(Շար. 3 և վերջ)